

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԺԱՄԸ
17:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ԿԱՆԱՆՑ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ն. Հովհաննիսյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հանրակրթության վարչության պետ
Կ. Սուջյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության պետ
Լ. Ղազարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ
Գ. Սողոմոնյան	Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ
Ն. Դուրյան	ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության ՔՀՎ-ի 3-րդ վարչության պետ, ոստիկանության գնդապետ
Ա. Թանաշյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կանանց հիմնահարցերի բաժնի պետ
Ռ. Յուզբաշյան	ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության առաջնային բուժօգնության բաժնի վարիչ

Ա. Թոփուզյան	Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ (համաձայնությամբ)
Ջ. Հասրաթյան	«Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Գևորգյան	Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ (համաձայնությամբ)
Ս. Ասլանյան	Հայաստանի մայրության ֆոնդի նախագահ (համաձայնությամբ)
Յ. Գևորգյան	Վաճառականների միության նախագահ (համաձայնությամբ)
Ռ. Ծառուկյան	«Գ. Կ. Ծառուկյան» ՍՊԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
Գ. Արմաղանովա	Առողջապահության աշխատողների արհմիությունների հանրապետական կոմիտեի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Ժամկոչյան	«Ղեկավարտիայի դպրոց» սկուլմբ, սոցիոլոգ-փորձագետ, «Կանանց հանրապետական խորհուրդ» ՀԿ-ի նախագահության անդամ (համաձայնությամբ)
Լ. Զեյնալյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության փորձագետ

1. ՀՀ վարչապետին կից կանանց հարցերով խորհրդի աշխատանքային խմբերի 2011 թվականի ծրագրերի կատարման մասին

- ա. աշխատանքային խմբերի ղեկավարների հաշվետվությունների ներկայացում և քննարկում,
- բ. 2012 թվականի ծրագրի համար առաջնահերթությունների առաջարկում և քննարկում,
- գ. քննարկված հարցի վերաբերյալ որոշման նախագծի քննարկում և ընդունում

 (Գ. Սողոմոնյան, Լ. Ղազարյան, Ջ. Հասրաթյան, Տ. Սարգսյան)

Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ Գ. Սողոմոնյանը ներկայացրեց ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի գիտության, կրթության և մշակույթի աշխատանքային խմբի գործունեության 2011 թվականի ծրագրով նախատեսված

միջոցառումների կատարման ընթացքը: Այդ կապակցությամբ նա նշեց, որ նախատեսված աշխատանքների մեծամասնությունը կատարված են, մյուս մասը գտնվում են ընթացքի մեջ, իսկ որոշ միջոցառումներ անհրաժեշտ է տեղափոխել 2012 թվականի միջոցառումների ծրագիր:

Անդրադառնալով «SOS» մանկատան սան, 4-րդ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի, 16-ամյա Հրանուշ Գրիգորյանի նկատմամբ կիրառված սեռական բռնության դեպքին՝ առաջարկեց անչափահասների համար մշակել վերահսկողական առանձնահատուկ մեխանիզմներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյանը ներկայացրեց սոցիալ-տնտեսական հարցերի և առողջապահության աշխատանքային խմբի գործունեության 2011 թվականի ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը: Այդ կապակցությամբ նա նշեց, որ նախատեսված միջոցառումներն ամբողջությամբ կատարվել են:

«Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալիստ» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասարայանը նշեց, որ 2011 թվականի ընթացքում հիմնական ուշադրությունը դարձվել է ՀՀ-ի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի 2009 թվականի փետրվարի 2-ի եզրափակիչ դիտարկումներին: Այդ նպատակով ՀՀ մարզերում, մասնավորապես, Երևան քաղաքում, Լոռու և Տավուշի մարզերում, կատարվել են որոշակի ուսումնասիրություններ ու համապատասխան միջոցառումներ:

Անդրադառնալով Գենդերային քաղաքականության հայեցակարգի ներդրմանը՝ նշեց, որ անհրաժեշտ է ՏԻՄ-երում կազմակերպել կոնկրետ աջակցություն: Դրանից բացի՝ հանրապետության 5 մարզում, 20 քաղաքում և 15 համայնքներում կատարվել է ուսումնասիրություն, որի արդյունքներն ամփոփվել են համապատասխան զեկույցում:

Այնուհետև առաջարկեց՝

1) ՀՀ-ի 3-րդ և 4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի զեկույցի մոնիթորինգի իրականացման, ինչպես նաև հաջորդ զեկույցի նախապատրաստման նպատակով ձևավորել միջգերատեսչական հանձնաժողով:

2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն օժանդակելու նպատակով (ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համատեղ) ձևավորել նոր խորհուրդ՝ գենդերային քաղաքականության մշտադիտարկում իրականացնելու համար.

Վաճառականների միության նախագահ Յ. Գևորգյանն առաջարկեց 2012 թվականի աշխատանքային ծրագրում ներառել նաև ՓՄՁ-ներում (մասնավորապես՝ առևտրի ոլորտում) աշխատող կանանց աշխատանքային պայմանների և վարձատրության հետ առնչվող հիմնախնդիրները:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Երևանի քաղաքապետարանի կրթության վարչության պետ Գ. Սողոմոնյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյանի և «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանի հաղորդումները.

2) հանձնարարել աշխատանքային խմբերի ղեկավարներին՝ խորհրդի անդամների գրավոր առաջարկությունների հիման վրա, մինչև 2011 թվականի դեկտեմբերի 15-ը, մշակել և խորհրդի քարտուղարություն ներկայացնել 2012 թվականի միջոցառումների ծրագրեր՝ ըստ համապատասխան բնագավառների:

2. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցի մասին

ա. ՀՀ պարբերական զեկույցների վերաբերյալ ՄԱԿ-ի կոմիտեի (CEDAW) եզրափակիչ դիտողությունների կատարման ընթացքի և հետագա քայլերի ներկայացում,

բ. կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն 2012 թվականի ՀՀ ազգային զեկույցի նախապատրաստման աշխատանքների համակարգման և 2013 թվականին Ժնևում այդ զեկույցի պաշտպանման հիմնախնդիրները,

գ. քննարկված հարցի վերաբերյալ որոշման նախագծի քննարկում և ընդունում

(Կ. Սուջյան, Տ. Սարգսյան)

ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության պետ Կ. Սուջյանը նշեց, որ առկա են այնպիսի դիտողություններ, որոնք ներկայացվում են մի քանի տարի անընդմեջ: Դրանք են՝

1) կանանց և տղամարդկանց համար սահմանված ամուսնական տարիքի անհամապատասխանությունը (կանանց համար՝ 17 տարեկան, տղամարդկանց համար՝ 18 տարեկան).

2) օրենսդրության կիրառումը կոնկրետ դեպքերի համար: Այսինքն, կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների խախտման գծով դատական գործերի (դեպքերի) բացակայությունը.

3) ազգային մեխանիզմի բացակայությունը.

4) որոշումներ կայացնող մարմիններում կանանց ընդգրկվածության ցածր մակարդակը.

6) առողջապահական ոլորտում հղիության արհեստական ընդհատումների դեպքերի բարձր ցուցանիշը.

7) աշխատաշուկայում գործազուրկ կանանց ցուցանիշի բարձր մակարդակը:

ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանն առաջարկեց

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ներկայացնել համապատասխան օրենսդրական փոփոխության նախագիծ, որով կանանց և տղամարդկանց համար ամուսնական տարիքը կսահմանվի 18 տարեկանը.

2) կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն 2012 թվականի ՀՀ ազգային զեկույցը պատշաճ մակարդակով նախապատրաստելու և 2013 թվականին ՄԱԿ-ի համապատասխան կոմիտեում (CEDAW) այն պաշտպանելու նպատակով ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով.

3) հանձնարարել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը՝ նախապատրաստել միջգերատեսչական հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու վերաբերյալ ՀՀ վարչապետի որոշման նախագիծ և այն ներկայացնել ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանին:

3. ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 20-ի N 19-3 արձանագրային որոշման 3-րդ կետի կատարման մասին՝ ՀՀ մարզպետներին տրված հանձնարարականի մասով

ա. «ՀՀ գեղերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի» միջոցառումների ցանկից բխող գեղերային քաղաքականության ամենամյա ծրագրերը մարզպետարանների կողմից ներկայացման գործընթացը (մինչև 2011 թվականի հոկտեմբերի 15-ը պետք է ներկայացվեր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)

բ. ներկայացված հարցի վերաբերյալ որոշման նախագծի քննարկում և ընդունում

(Վ. Տերտերյան, Տ. Սարգսյան)

ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանը նշեց, որ ՀՀ մարզպետարաններում ստեղծվել են համապատասխան հանձնաժողովներ և ՀՀ գեղերային քաղաքականության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկից բխող գեղերային քաղաքականության ամենամյա ծրագրերը ներկայացվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Այնուհետև նա նշեց, որ համայնքային ծառայության պաշտոններում կանանց թվաքանակը կազմում է 49.6 տոկոս: Սակայն գյուղական համայնքների կին ղեկավարների թիվը կազմում է ընդամենը 24, իսկ քաղաքային համայնքներում՝ ընդհանրապես բացակայում են: Համայնքների ավագանիների կազմում կանանց ներգրավման մասով նկատվում է բավականին առաջընթաց (333 համայնքում 357 կին ավագանու անդամ), և մի շարք համայնքներում դրսևորված է գեղերային հավասարության վերաբերմունք:

«Համալսարանական կրթությամբ կանանց սոցիալիզմ» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանն առաջարկեց՝

1) քննարկման առարկա դարձնել նաև քաղաքային համայնքներում քաղաքապետի կին տեղակալ նշանակելու հարցը: Այնուհետև նա անդրադարձավ «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի և «Հ1» հեռուստաալիքի կողմից գեղերային հարցերի լուսաբանման խնդրին: Անցկացված մոնիթորինգի արդյունքում բացահայտվել է, որ ՀՀ-ում գործող այլ ՋԼՄ-ներն ավելի շատ են անդրադառնում գեղերային հարցերի լուսաբանմանը, քան պետության կողմից ֆինանսավորվող «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթը և «Հ1» հեռուստաալիքը: Այդ կապակցությամբ առաջարկեց «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթում հրապարակել Կանանց նկատմամբ

խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցը և այլ տեղեկատվություններ.

2) ձեռնարկել միջոցներ՝ միջազգային միջոցառումներում Հայաստանը ներկայացնող բուկլետների կամ տեղեկատվական թերթիկների տպագրման ուղղությամբ.

3) Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ կազմակերպել առանձին հանդիպում՝ ՀՀ-ում գործող կանանց կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանն առաջարկեց «Լավագույն կին-համայնքապետ» մրցանակի փոխարեն սահմանել «Լավագույն համայնքապետ՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» մրցանակը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ Կ. Հարությունյանը նշեց, որ Գենդերային հավասարության ռազմավարության մեջ ներառված չէ ՅՈՒՆԵՍԿՈ-ի հաշվետվությամբ ներկայացված՝ հանրակրթական դպրոցներում տղամարդ ուսուցիչների ներգրավման խնդիրը: Դրանից բացի՝ ուսումնական հաստատություններում տղաների ուսման առաջադիմության ցուցանիշը լրջագույնս զիջում է աղջիկների առաջադիմության ցուցանիշին: Այդ կապակցությամբ առաջարկեց, որպեսզի ներկայացված խնդիրները ևս արտացոլել գենդերային ռազմավարությունից բխող միջոցառումներում:

ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանն առաջարկեց՝

1) որպեսզի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոնվենցիայի համաձայն Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցը և այլ տեղեկատվություններ հրապարակվեն ինչպես «Հայաստանի Հանրապետություն», այնպես էլ «Ռեսպուբլիկա Արմենիա» պաշտոնաթերթում.

2) միջազգային միջոցառումներում Հայաստանը ներկայացնող բուկլետների կամ տեղեկատվական թերթիկների տպագրման հետ կապված հարցերը ներառել ՀՀ վարչապետին կից կանանց հարցերով խորհրդի 2012 թվականի միջոցառումների ծրագրում:

Այնուհետև ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանը խորհրդի անդամներին հորդորեց ցուցաբերել ակտիվ մասնակցություն՝ 2012 թվականին կայանալիք ՀՀ ԱԺ-ի ընտրացուցակների կազմման գործում (ներկայացնելով համապատասխան թեկնածություններ)՝ ՀՀ ԱԺ-ում գենդերային հավասարությունն ապահովելու համար:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՀՀ մարզերում և համայնքներում գենդերային քաղաքականության ներդրման ուղղությամբ համապատասխան մեթոդական ուղեցույց մշակելու նպատակով ձևավորել աշխատանքային խումբ՝ «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի

նախագահ Ջ. Հասրաթյանի, Հայաստանի կանանց հանրապետական խորհրդի նախագահ Ա. Թովուզյանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ Լ. Ղազարյանի և մյուս շահագրգիռ անձանց մասնակցությամբ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի գլխավորությամբ.

2) հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանին եռամսյա ժամկետում աշխատանքային խմբում մշակել ՀՀ մարզերում և համայնքներում գենդերային քաղաքականության ներդրման մեթոդական ուղեցույց և այն ներկայացնել առաջիկա Կանանց խորհրդի նիստի քննարկմանը.

3) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ կանանց խորհրդի շահագրգիռ անդամների հետ միասին մշակել համապատասխան չափորոշիչներ ՀՀ մարզերում «Լավագույն համայնքապետ՝ գենդերային հարցերի լուծման ուղղությամբ» և «Լավագույն կին-գործարար» մրցանակներ սահմանելու նպատակով.

4) առաջարկել «Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Ջ. Հասրաթյանին Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ առանձին հանդիպում կազմակերպելու նպատակով ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել համապատասխան մասնակից կազմակերպությունների ցուցակ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ